

ՆԱԽԱՍՈՎՐԱՏԵԱՆ ՇՐՋԱՆ

PRE-SOCRATIC ERA

Փիլիսոփայության պատմության մեջ, մինչև *Սոկրատես* (մ.թ.ա. 5-րդ դարու վերջը) կը կազմէ ժամանակաշրջան մը, որ այսօր կը կոչուի՝ **Նախասոկրատեան շրջան**: Նախասոկրատեան փիլիսոփաները ընդհանրապէս կը հետաքրքրուին բնութեամբ, բնութեան երեւոյթներով, գոյութեան հիմնական *Նախանիւթով* (յուն.՝ archê), ուսողութեամբ (մաթեմատիկա) եւ տիեզերքով, ինչպէս նաեւ կրօնական երեւոյթներով ու բարոյագիտութեամբ (Էթիկա, յուն.՝ êthikê): Նախասոկրատեան այս ժամանակաշրջանը կարելի է անցման շրջան նկատել՝ *բազմաստուածեան կրօնէն* (Polytheism) դեպի *փիլիսոփայութեան* ոլորտ:

Նախասոկրատեան փիլիսոփաներու երկերը մեզի հասած են անուղղակի կերպով, գլխաւորաբար յետսոկրատեան փիլիսոփաներու կողմէ կատարուած մէջբերումներով: Այս պատճառով է, որ մենք ամբողջական երկեր չունինք, այլ միայն՝ երկերէ քաղուած հատուածներ: Նախասոկրատեան երկերու մեծամասնութիւնը գրուած է քերթուածի ձեւով ու բանաստեղծական ոճով:

Սօս 200 տարիներու վրայ երկարող Նախասոկրատեան այս ժամանակաշրջանը կը պարփակէ հետեւեալ փիլիսոփայական ուղղութիւններն ու դպրոցները: Այստեղ պիտի անդրադառնանք, նաեւ այդ ուղղութեանց նշանաւոր փիլիսոփաներուն կամ դպրոցներու հիմնադիրներուն (իրենց կեանքի մօտաւոր թուականներով եւ հակիրճ տեղեկութիւններով).-

1. Յունական կամ Միլետեան դպրոցը

Միլետոս (Miletos) քաղաքի մէջ՝ Յոնիա (Ionia, Փոքր Ասիա ... այսօրուան Թուրքիոյ արեւմտեան ծովափին): Այս դպրոցին հիմնադիրն է *Թալէս Միլետոսցին*. երկու այլ նշանաւոր ներկայացուցիչներն են՝ *Անաքսիմանդրոս* եւ *Անաքսիմենէս*:

- **Թալէս** (Thales of Miletus, 623/624 – 547/548 մ.թ.ա.). ծնած է Միլետոս եւ ընդունուած է, որպէս Հին Յունաստանի 7 իմաստուններէն մէկը: Ան կը նկատուի Արեւմտեան փիլիսոփայութեան առաջին ներկայացուցիչը եւ ընդհանրապէս՝ փիլիսոփայութեան ուղին հարթողը: Թալէս հիմնադիրն էր Միլետեան դպրոցին (ինչպէս նշուեցաւ), որ շարունակուեցաւ իր երկու յաջորդներուն կողմէ: Թալէս *ջուրը* (յուն.՝ hýdōr) կը համարէր՝ որպէս հիմնական Նախանիւթ: Գիրք չէ գրած, սակայն իր մասին կը պատմեն դասական փիլիսոփաներ՝ Պլատոն եւ Արիստոտելէս: